Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

GRAD
EREN
249
BUHR

D 1,220,576

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

2167

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

249

Digitized by Google

Digitized by Google

Գրիգորյան, Սուքաս

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գրիգորյան Հայոց

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ԱՑԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԻԳԵԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ
Գրքամբ թ. 2167

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1865

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

ԳՐԱԴ
ԵՐԵՎ
746
Ցանկ

Կ. ՊՕԼԻՍ — ՑԱՐԵԻԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Digitized by Google

GRAR
EREV
249
10.01.99

ՀՐԱՒԷՐ

ՀԱՄՕՐԷՆ ԱԶԳԻՆ ՀԱՅՈՑ

Այս տեղեկագիրն անց կացող Յունիս 12ին, մեր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր առաջը հանելի, որ եկեղեցական և աշխարհական ժողովներուն հաղորդելով, ակն յայտնի ստուգուած ճանգամանքներուն հանձայն՝ մի տեսչութիւն անեն Հայաստանեայց Եկեղեցւոյ կաթողիկոսական ինքնուրոյնութիւնը՝ գտնուած ճգնաժամէն ազատելու։ Բայց Սրբազան Հօրը սառ վարմունքն ու ժողովներուն անտարբերութիւնն այս ամենամեծ խնդրի մասին այսքան ժամանակէ հետէ, պարտաւորեցին ինձ ի լոյս ածել այս տեղեկագիրն, որպէս զի հաստատեմ իմ ձայնը, մեք Սուրբ Եկեղեցւոյ հաղորդութեամբ և մեր ազգայնութեան զգացումով միացած՝ բոլոր իմ մերձաւոր և հեռաւոր եղբայրներուն։

Իսկ ես, իմ կողմանէ հրաւէր կը կարդամ աղերսարշ ձայնով Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր այն եկեղեցական և աշխարհական զաւակներուն, որոց սրտերումը դեռ կենդանի է մեր նախնի սուրբ հարց աւանդած սկզբունքներն ու օրէնքները, նրանց պատմութեանց և դպրութեանց յիշատակը և մեր ազգային ընկերական բարուց և վարուց զգացողութիւնը։ Հայոց Աշխարհի բոլոր այն որդւոցը կը կանչեմ յառաջ, որոց սրտերումը դեռ եւս դրոշմուած է մեր նախնեաց կրօնական առաքինութեանց յիշատակներն ու օրինակները։ Նրանց է այսօր վիճակուած բոլոր հայկական ժողովրդեան կողմէն վեր կենալ և կորստենէ ազատել մեր կաթողիկոսութեան ինքնազոյութիւնն ու իրաւունքները, վասն զի նրանց է հիմա կարգը, նրանց է հիմա նաեւ այն պարտքն, որն որ դարերով մեր կաթողիկոսները կատարեցին ամենայն անձնանուիրութեամբ, պահպանելով

Digitized by Google

մեր Սուրբ Եկեղեցին և մեզ նրա ժողովուրդը դարեկան ամեն տեսակ բռնակալութենէ և բռնաբարութենէ և հասուցին մեզ այս լուսաւոր ասուած դարումս։ Արդ այսօր կաթողիկոսութիւնն է գտնուում վտանգումը, նա է որ տապալ գլոր է գալի Ռուսական քաղաքականութեան ձեռին։ Ջլատում է մեր այն Հայրապետական աջը, որուն մէջ աւանդուած է դարերուց հետէ մեր բարոյական ընկերականութեան թելերը, կտրատում է և այն թելերուն օղակն, որով կապուած է այսօր Հայոց ազգն իր Եկեղեցւոյն մէջ և Եկեղեցին Հայոց ազգին մէջ։ Ուրեմն ժամն է մտածելու մեր ամեն հարազատ ազգայնոց, մեր ազգի բարոյական և հոգեւոր կեանքի վերազարգացմանը մասին. ժամն եկել է, ասում եմ շեշտելով, ջերմ պաշտպան կանգնել մեր՝ թէ մարդկային և թէ ազգային ընկերականութեան հոգւոյ փրկութեան համար. այն է Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ և նրա կաթողիկոսութեան ազատութեանը։

Մնամ

Հարազատ որդի Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Դատը գեղ, 1665 օգոստոս 20.

Digitized by Google

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ԱՑԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՑ

Ամենապատիւ Տէր Գէորգ Սրբազան Պատրիարք Հայոց Կոստանդնուպօլսոյ, Արքեպիսկոպոս ամենայն Եկեղեցեաց Հայոց որ ի Տերութիւն Օսմանեան, Նախագահ Հայոց ազգային Ընդհանուր եւ Մասնաւոր ժողովոց, եւ պատուական Անդամ Եկեղեցական եւ Աշխարհական պատկառելի Ժողովոց։

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

եւ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԿԱՆՔ

Ձեզ քաջ յայտնի է, որ Ազգային Ընդհանուր ժողովի վերջին նստին մեջ՝ Սրբազան Հայրն առաջարկեց Ընդհանուր ժողովի երեսփոխաններուն՝ իրանց ուշադրութիւնը դարձնել մեր Հոգեւոր տիրոջ ամենայն Հայոց Կաթողիկոսի մասին յուզուած խնդրին վրայ։ Ընդհանուր ժողովը, Սրբազան Հայր՝ Ձեր հաճութեամբ՝ այս կարեւոր և ամենամեծ խնդիրը յանձնեց նորակազմ Քաղաքական ժողովին, որպէս զի լուսաւոր վերահասութիւն գործելով նրա վրայ, հարկ եղած տնօրէնութիւնը գործադրէ։ Արդ սրբազան Հայր և պատուական ժողովականք, ես այս առիթը բարեպատեհ համարելով՝ իբրև հարազատ զաւակ Հայաստանեայց Եկեղեցւոյ և որդի Հայկական ժողո-

Digitized by Google

վրդեան, մի քաղցր պարտք համարեցի իմ վրայ, ներկայ տեղեկագիրը Ձեր յառաջը հանել. քաջ տեղեակ լինելով արդէն իմ վեցամեայ բնակութեամբն ի Թիֆլիս, մեր Եկեղեցւոյ կաթողիկոսութեան հիմակուայ դրութեան և վիճակին հանգամանքներուն վրայ: Եւ ահա այս է իմ Տեղեկագիրը:

Մենք, Օսմանեան գթասիրտ տէրութեան մէջ բնակող Հայքս առաջինն եղանք, այս քաղաքակրթութեան ընդհանուր ծաւալման ժամանակ, Բարձրագոյն Դրան մեզ պարգևած իրաւունքներովն ազգային Եկեղեցւոյ վարչութեան օրինաւոր ճանապարհին մէջ մտնողները: Ուստի դէպ ի մեր վրայ են դարձուցած հիմա բոլոր մեր ազգայնոց մտածմունքներն ու յոյսերը. մանաւանդ մեր այն հեռաբնակ ազգայնոց յոյսերն, որոնք մեզ հետ են կապուած մեր սուրբ Եկեղեցւոյ անլուծ կապովը և մեր նախնի և մեծ ազգայնութեան զգացմունքովը, մեր այն հեռաւոր ազգայնոց մասին եմ ասում, որոնք ոչ միայն զրկուած են արօտնութենէ մեզ պէս ազգովին խորհրդակցելով տեսչութիւն և հսկողութիւն անելու իրանց ազգային եկեղեցական և հասարակական գործերու վրայ, այլ նաև ցաւալին այն է՝ որ իրաւունք էլ չունին բացարձակ պաշտպանելու Թշնամեաց դէմ իրանց Եկեղեցին, այն լուսաւոր ճրագը մեր ազգային կենաց, որ կռապաշտութեան և բարբարոսութեան ժամանակ փրկեց մեր նախնիքը հոգևոր և մտաւոր խաւարէն:

Մենք եղանք առաջին քայլն առնողը Եկեղեցւոյ հոգևոր վարչութեան և ազգային բարոյական զարգացման ճանապարհին մէջ, բայց պէտք է մեր միտը բերենք, որ մի ազգի բարոյական վերազարգացման ճանապարհին մէջ մի օրէնք կայ, կանգնիլ, կնշանակէ յետ մնալ, ուստի թէ որ կամք է մեզ պահպանել մեր առած առաջին քայլը մի երկրորդ քայլ էլ առնելու պարտական ենք, և այս քայլն է էական և կենսատու, այսինքն յառաջ գնալ. ի հարկէ խաղաղութեան ճանապարհով և ամենեին դուրս չգալով օրինաւորութեան և ճշմարտութեան սահմաններէն: Իրաւ է, որ մեծ քայլ առինք մենք. բայց ազ-

Digitized by Google

գերու վիճակը յանկարծ փոփոխութիւն չէ կարող առանալ, ազգային զարգացման ընթացքի վտանգները չեն կարող անհետ լինել մի աչք բաց ու խուփ անելով, մեր նամապարհը դեռ ևս դժուարին է. մեզ կրնայ դեռ մաքառել մեր ընդդէմ անգամ, մաքառել ինքուրեան տէրութեան մեր սուրբ Եկեղեցւոյ կործանմանը նպատակաւորած բռնած ընթացքին և վարմունքին դէմ: Այս տէրութիւնը ի վաղուց հետէ, մեր Եկեղեցւոյն և ազգին օգտին համար ասելով, պատնեշ է քնում զուցէ ակամայ կամ անգիտութեամբ՝ մեր և Օսմանեան գծած տէրութեան մէջ դժուութիւն սերմանելու, բուն Հայոց մէջ հակառակութիւն, ու այսպիսի խարտանկ ընթացքի հետևանքն այն է քնում, որ շատ անգամ խռովացնում և նշնաւեցնում է ոչ միայն Հայերն իրարու հետ՝ այլ նաև Օսմանեան տէրութեան մէջ գտնուող քրիստոնեայները նոյն իսկ Օսմանեան տէրութեան դէմ:

Մեր այս նոր վիճակը, մեր ազգային ժողովները, այսինքն, Սահմանադրութիւնը մի սուրբ պարտաւորութիւն կրնէ մեր ամեն Հայու վրայ, ազգային կենաց կենդանութեան, այսինքն Եկեղեցւոյն համար դնել իր վերջին բնիծնը. իսկ մեզ յատկապէս կրպարտաւորէ, մեր ժողովական նիստերու մէջ բաւական չլինել՝ զբաղիլ միայն մասնաւոր կամ առանձին գործերով, որոնք մեզ են վերաբերում, այլ ամբողջ ազգի ընդհանուր օգուտը նկատել, քան զի ընդհանուրը կատարելով, կատարած կլինինք և մասնաւորը:

Պրբազան Հայր և պատուական ժողովականք, այն անձը՝ որ Հայոց ազգը հին ժամանակներէն մինչև այսօր սովորութիւն ունի հանրազգային քուէարկութեամբ ընտրել պատիւ ու գրաշտական իր ազգային հոգևորական բարոյական օգտին համար, այն անձը՝ որ եղել է միշտ հաւատարիմ. իսկ երբեմն և բարձր քան զԹեոդորը, այն անձը՝ որ քանի՞ քանի անգամ ընդդէմ է կացել և կասեցուցել է Թագաւորին. մինչ նա մոռնալով ժողովրդի իսկական օգուտը, զրգռուած աշխարհակալութենէ

կամեցել է պատերազմ յարուցանել և իր երկիրը աւերածութեանց և ազգը բռնաբարութեանց ենթարկել. պատմութիւնը մեզ ցոյց կըտայ, որ այն անձը մեր հոգևոր Տէրն ամենայն Հայոց Կաթողիկոսն է եղել:

Հայոց ազգի հասկացողութիւնը վաղուց արդէն անկախ էր կացուցել իր Կաթողիկոսին Թագաւորի իշխանութենէն, որպէս զի նա ամեն ժամանակ կարող լինէր ճշմարտութեամբ և ազատութեամբ ներկայացնել հոգևոր և բարոյական օգուտն այն ազգին՝ որ նրան ընտրել էր: Մեր նոր, այսինքն քրիստոնէական դարերու պատմութիւնը հիմնած է. այդ երկու իշխանութեանց վրայ. առաջինը կաթողիկոսական, որ կընտրուէր համազգովին. երկրորդ Թագաւորական, որ յորդուց որդի կանցնէր. այս իսկ պատմութեան մէջ ոչ մի տեղ յայտնի յիշուած չէ, թէ մեր հոգևոր Տէրը, ամենայն Հայոց Կաթողիկոսը պարտաւորուած լինի երդուիլ Թագաւորին իբրև նրա հպատակ: Հայոց ազգը նրամէն մի երդում էր պահանջում. երդումն հաւատարմութեան առ իւր Եկեղեցին. որոյ մէջ էին նրա հաւատը, յոյս երջանիկ անանց կենաց և գլխաւոր հիմունք քրիստոնէութեան՝ միութիւն և ազատութիւն: Զանց առնելով այս տեղ մի առ մի յիշելն այն ազգերն, որ այլ և այլ ժամանակ կամեցել են Հայաստանեայց Եկեղեցւոյն Կաթողիկոսին կախուած կացուցանել իրանց աշխարհական իշխանութենէ: Դարձնենք մեր ուշադրութիւնը նրայ ներկայ դրութեան և վիճակին վրայ. այն կարգադրութեան Հայաստանեայց Եկեղեցին կառավարելու, որ յօրինուած է Ռուսաց տէրութենէն 1836 թուականին, կարծել տալով մեզ թէ այն՝ հիմնուած է մեր եկեղեցական հին աւանդութեանց և օրինադրութեանց վրայ. որնոր ընդհակառակն երևում է այն լինի յատկապէս մի հնարքի միջոց մեր Եկեղեցւոյ ինքնագոյ ազատութիւնը և Հայոց ազգի հոգևոր և բարոյական օգուտները կործանելու և Ռուսաց տէրութեան ազդեցութիւնը Հայկական ժողովուրդ գտնուող Արևելեան երկիրներու մէջ միջնորդութեամբ մեր Կա-

Digitized by Google

Ծողիկոսին տարածելու համար՝ աշխարհակալութեան նպատակներով:

Տեսնենք, յառաջ յառաջ, ինչ նշանակութիւն կտայ յիշեալ կարգադրութիւնը ամբողջ Հայոց ազգէն ընտրուած Կաթողիկոսին. «Պատրիարքը, կասէ այդ կարգադրութիւնը, պարտաւոր է Ռուսաց երկիրը մտնելէն յետոյ երդուիլ իր հպատակութիւնը և հաւատարմութիւնը Ռուսաց տէրութեան»: Ահա առաջին անարգ և անվայել քայլը, որ պարտաւորուած է անել մեր հոգևոր Տէրը Կաթողիկոսն ամենայն Հայոց. վասն զի չորս միլիոն Հայկական ժողովուրդը, որ Օսմանցւոց, Ռուսաց, Պարսից, Անգլիացւոց և ուրիշ իշխանութեանց տակն է և կընտրէ Կաթուղիկոսին իր հոգևոր Տէրն ու բարոյական հովիւը. ինչպէս կարող է թոյլ տալ նրան երդումով հպատակ լինիլ այն տէրութեան, որոյ մէջ հազիւ միայն տասներորդ մասն է ընդհանուր Հայոց ազգի, հուր մնաց, որ ոչ իր ազգային աւանդութիւնքն և ոչ օրէնսդրութիւնքը երբէք չեն պարտաւորել Կաթողիկոսին երդուիլ իր թագաւորին անգամ: Ուրեմն կարգադրութեան այդ գլխաւոր յօդուածն ամենևին հակառակ է Հայոց աւանդութեանց և կարգադրութեանց:

Տեսէք, սրբազան Հայր և պատուական ժողովականք. մեր հոգևոր տիրոջ ամենայն Հայոց Կաթողիկոսի ծանր դրութիւնը՝ ինչպէս պիտի վարուի նա երբ երդումը կպահանջէ նրանէն մի գործողութիւն, որու հետևանքը վնասակար է ամբողջ Հայոց ազգին և Եկեղեցւոյն. միթէ ճշմարիտ չէ՞ որ նա աւելի պարտաւորուած է Հայոց ազգի առջև, որ նրան ընտրել է քան որ և է տէրութեան առջև: Ուրեմն ինչ կարգադրութիւն է այն, որ երկու դիպուածներու մէջ էլ յանցանքը կանոնի մէջ կըդասէ:

Ահա, Ձեզ, մի քանի դիպուածներ, որոնց մէջ Կաթողիկոսի երդումը առ Ռուսաց կայսր և իր պարտաւորութիւնը առ իւր ազգն և Եկեղեցին տարօրինակ կերպով իրարու կհանդիպին. սրանց տեղեկութիւնքը ես իմացել եմ հաւաստի աղբիւրներէ։

Digitized by Google

1843 թուին, Բէսարաբիայի վիճակաւոր առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոսը յետ համազգային ընտրութեամբ Կաթողիկոս ամենայն Հայոց անուանելու, վեր կացել գնացել էր Պէդրբուրգ և յառաջն էր ելել Նիկողայոս կայսեր: Կայսրն առաջարկել է նրան սպիտակ վեղար ծածկել Ռուսաց Մետրապոլիտներու նման. յիշատակաց արժանի Ներսէս Կաթողիկոսը քաղաքավարութեամբ այն ցնորամիտ պատիւը մերժել է: Նրա ճանապարհորդութենէն մի փոքր յառաջ դէպ ի Սուրբ աթոռը, այլադաւան եկեղեցական գործոց պաշտօնեայն եկել Կաթողիկոսի մօտ և իր կայսեր անունով առաջարկել է նրան միաւորել Հայաստանեայց եկեղեցին Ռուսաց եկեղեցւոյ հետ կամ թէ Հայոց եկեղեցին Ռուսականին մէջ ձուլել: Ներսէս Կաթողիկոսը նմանապէս շատ զօրեղ պատասխանով հերքել է պաշտօնէին և նրա գործակից Լազարեանց այս առաջարկութիւնը: Իսկ Թիֆլիզում Կովկասու փոխարքայ իշխան Բարեատինսկին նորէն առաջարկել է Ներսէս Կաթողիկոսին նոյն միաւորութիւնը երկու Եկեղեցիներու և նոյն ժամուն յայտնել է՝ թէ հրաման ունի կայսրմէն Սրբոյն Անդրէասի ասպետութեան նշանը մատուցանել նրան. այս մասին իշխան Վորոնցովը, նախորդ փոխարքային Կովկասու, ծանուցել էր Ներսէս Կաթողիկոսին առանձին նամակով, ասելով թէ՝ Բարեատինսկին մի վեհ յանձնարարութիւն ունի կայսեր կողմէն առ Ներսէս Կաթողիկոսն, բաց ի այս պարգևէն 1857 յունվար ամսուն Բարեատինսկին առաջարկել է նմանապէս վեց հազար ռուբլի արծաթ տարեկան թոշակ տալ Ներսէս Կաթողիկոսին Զալալեանց Սարգիս եպիսկոպոսի ներկայութեանը, միայն թէ հաճի նա կատարել տէրութեան կամքը. որ էր հրաժարուել հոգևոր իշխանութեան գործերէն և միայն անունով մնալ Կաթողիկոս: Ներսէս Կաթողիկոսի ազգու մերժողութիւնը չզարմացուցին Հայոց ժողովրդին, որ ի Ռուսիա, որուն ծանօթ էր նրա անսահման սէրը իր ազգին և Եկեղեցւոյն վրայ: Այնուհետև վերջանում են անձնական յարաբե-

Digitized by Google

րութիւնքը փոխարքային և Ներսէս Կաթողիկոսի մէջ տեղ և նրանց մէջ՝ միջնորդական անձն, փոխարքայի նշանակելովը՝ լինում է Մարգիս Արքեպիսկոպոսն Զալալեանց պատուասիրութենէ հրապուրուած և արդէն գործիք դարձած Ռուսաց տէրութեան ձեռին և նոյն տարին փետրուար ամսուն Ներսէս Կաթողիկոսը վախճանում է յանկարծական մահով։

Նոյն 1836 թուի կարգադրութեան զօրութեամբ, ամենայն Հայոց Կաթողիկոսի մօտ կարգուած է Ռուսաց Տէրութենէն մի պաշտօնաւոր, Պրօկուրօր, անունով, իբրև նրա օգնական Ռուսաց լեզուի և օրէնքի վրայ տեղեկութիւն տալու։ Բայց յատկապէս նրա պաշտօնն է ձեռքի տակէն լրտեսութիւն անել բոլոր սուրբ Աթոռի գործողութեանց վրայ, որնոր կըկատարէր նա յառաջ առ առաջին պաշտօնեայն Տէրութեան. իսկ հիմա առ Կովկասու փոխարքայն։ Ցիշեալ կարգադրութիւնը այլ և այլ պատճառներով Եկեղեցւոյ բոլոր դրաւական գործածութիւնը, այնպէս կհամարէ՝ իբրև թէ նրանք սեպհականութիւն լինին այս կամ այն Եկեղեցւոյ. կարծես թէ այն Եկեղեցիները չեն կազմել մի Հայոց Եկեղեցի, որոյ տեսչութիւնը Հայոց ազգը յանձնել է իր ընտրածին, այսինքն ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Այս հնարովի կանոնը խռովութիւն և անմիաբանութիւն սերմանեց և կսերմանէ Կաթողիկոսի երեսփոխաններու մէջ, Հայոց ազգի և նրա պատգամաւորներու մէջ։ Այս կարգադրութիւնը հակառակ մեր Եկեղեցւոյ օրինադրութեանց և աւանդութեանց իրաւունք կտայ նաև եպիսկոպոսներուն իրանց ստացուածքը կտակել իրանց ազգականներուն, որ յաւիտեան կզրկէ աթոռը նիւթական կարողութենէ, որոյ կարևորութիւնը, ոչ միայն գեղեցիկ հիմնադրութեանց համար ամեն ժամանակ վկայուած է, այլ և անհրաժեշտ է յիշելով անցկացած սև օրերը, որոց նմանները գուցէ կրկին պատահին մեր ազգին Եկեղեցւոյն։ Մի խօսքով թէ որ ուշադրութեամբ քննենք այս կարգադրութիւնը. նրա ամեն մի յոդուածի մէջ կտեսնենք մի խորամանկ ձեռն. որ կձգտի բպկտել ի հիմանց մեր Եկեղեցւոյ

ինքնազոյ ազատութիւնը և Հայոց ազգի հոգևոր և բարոյական օգուտը:

Սրբազան Հայր և պատուական ժողովականք, ժամ է մեզ համար արդէն մտածել այս կեղծ և ստրուկ վիճակին մասին, որոյ մէջ կաշկանդուած կապուած է ամբողջ ազգի ընտրեալը Եկեղեցւոյ հոգևոր տէրութիւնը, Կաթողիկոսութիւնն ամենայն Հայոց: Այդ երդումը հպատակութեան և հաւատարմութեան Ռուսաց կայսեր, որ կպահանջէ մեր Կաթողիկոսէն 1836 թուի կարգադրութիւնն անյարմար և հակառակ է, ինչպէս մեր Եկեղեցւոյ աւանդութեանց օրէնսդրութեանց և Հայոց ազգի հոգևոր և բարոյական օգտին, նոյնպէս էլ և այն Տէրութեանց շահախնդրութեանցը, որոյ հպատակ է մեր ազգի մի մասը, հվ գիտէ. ինչ թշուառութիւն կհասնէր մեր Հայոց ժողովրդին թէ որ Կաթողիկոսական Աթոռի վրայ բազմած չլինէր 1853 թուին այն մարդն Աստուծոյ, որոյ յայտնի էր Ռուսաց Տէրութեան քաղաքականութիւնը: Երբ իշխան Մէնչիկովն գալիս է Կոստանդնուպօլիս, իսկոյն խնդրումէ Կովկասու փոխարքայէն ուղարկել Օսմանեան Տէրութեան մայրաքաղաքը մի եպիսկոպոս. իբրև պատգամաւոր Էջմիածնական գործերու համար: Վորոնցովն, այն ժամանակուայ Կովկասու փոխարքայն առաջարկումէ Ներսէսին այս խնդրի գործադրութիւնը. հաւատացընելով նրան, թէ այդ պիսկոպոսը եպաշտպանելու էր Օսմանեան Տէրութեան առջև Հայոց ազգի օգուտը. բայց արժանայիշատակ Ներսէսն հասկնալով այդ հնարագիտութեան մէջ ծածկուած խորհուրդը չէ կատարում Տէրութեան առաջարկութիւնը, պատճառ բերելով, թէ այն միջոցում չունէր իր եպիսկոպոսներուն մէջ այնպիսի գործի համար մի ընդունակ անձն: Ներսէս Կաթողիկոսին համարեցին անհաւատարիմ Տէրութեան դէմ, կասկածեցին նաև այս մասին, որպէս թէ գաղտնի թղթակցութիւն ունէր նա Օսմանեան Տէրութեան հետ. ոմանք կասեն նաև թէ նրա հինօրեայ բարեկամ փոխարքայն Մուրավիէվն է ձգել նրա վրայ մատնութեան քարը:

Digitized by Google

Թիրաւի ինչպէս դատենք Ներսէս Կաթողիկոսի վարմունքը, երդմնազանցութիւն էր այդ, թէ չէ՞ կատարողութիւն իր սրբազնագոյն պարտաւորութեան, առ իր Եկեղեցին և ազգը. որոյ պաշտպանութիւնը յանձն էր առել օծուելով և երդուելով; Ինչ կթուի թէ այդ ուխտը իր Եկեղեցւոյ և ազգի հետ շատ վերագոյն է քան որ և իցէ Տէրութեան պահանջը, պատմութեան դատաստանը այդպիսի գործերու մասին յայտնի է. սա իրաւացի կհամարէ այդպիսի արարքը յանուն Եկեղեցւոյ, որ երբէք չէ կարող լինել աշխարհակալներու փառասէր ձեռնարկութեանց մասնակից, յանուն մարդկութեան, որ միշտ օտար է եղել Ռուսաց Տէրութեան տիրապետականութեան հոգւոյն, յանուն Հայոց ազգայնութեան որոյ մեծամեծ վնասներ պիտի հասանէին և որոյ արիւնը գետի նման պիտի թափուէր, թէ որ Ներսէս Կաթողիկոսը կամակից լինէր Նիկողայոս կայսեր աշխարհակալական նպատակներուն: Ուրեմն կրկնենք, թէ որ կաթողիկոսական Աթոռի վրայ չլինէր արևելեան վերջին պատերազմի ժամանակ այն անձն, որ լաւ գիտէր Ռուսաց Տէրութեան քաղաքականութիւնը, Օսմանցիք և Եւրոպացիք մեծամեծ դրժուարութեանց կհանդիպէին իրանց յառաջադիմութեան ընթացքին մէջ և մեր ազգը կրկորցներ բոլոր իր նշանակութիւնը, ինչպէս Օսմանեան Տէրութեան, նոյնպէս և Եւրոպեան Տէրութեանց առջև: Ահա ձեզ մի քանի ապացոյց, թէ ինչպէս շարունակ կրփորէ ու կքանդէ Ռուսաց տէրութիւնը մեր Եկեղեցւոյ ինքնագոյութիւնը և Հայոց ազգի հոգևոր և բարոյական բարեմասնութեանց հիմունքը:

1858 թուին, Կոստանդնուպօլսոյ նախորդ Պատրիարք, Մատթէոս արքեպիսկոպոսը ընտրուում է Կաթողիկոս ամենայն Հայոց: Կովկասու փոխարքայն իբր թէ սրա ճանապարհորդութեան ուղեկից կամ առաջնորդ լինելու համար դէպ ի Էջմիածին, նշանակեց Հայոց ազգէն Միքայէլ Լորիս Մելիքեանցն, որ վերջին արևելեան պատերազմի ժամանակ լրտեսապետութեան պաշտօնն էր վարում: Այս նշանակութեան յատուկ նպատակն

Digitized by Google

այն էր, որ նրա գործակցութեամբ խնդրագիր յօրինուի Պօլսոյ Հայոց կողմէն Կաթողիկոսին տրուելու համար, բայց իհարկէ գիտէր Մատթէոս արքեպիսկոպոսը այդ խնդրագրի խորհուրդը, որու մասին տարակոյս չկայ այսօր. վերջապէս խնդրագիրը յօրինուում է կամ յօրինուած է լինում Ռուսաց դեսպանատան մէջ և Կաթուղիկոսի Էջմիածին հասնելէն յետոյ ուղարկուում է նոյն վանքը Միքայէլ Լորիս Մելիքեանցի ձեռքով:

Խնդրագրի գլխաւոր և ամենատխուր բովանդակութիւնն այն էր, որ մի նոր եկեղեցական ժողով գումարուի և այն ժողովին մէջ նորէն քննութեան տակ ձգուի մեր Եկեղեցւոյ դաւանութիւնը, անտարակոյս այս քննութեան ժամանակ, պիտի ընդունուէր Ռուսաց Եկեղեցւոյ դաւանութիւնը և ծէսերը և երազուած միաւորութիւնը կատարուէր: Երբ այդ ժողովը տեղի չունեցաւ, Մատթէոս Կաթողիկոսի օծուելէն յետոյ Կովկասու փոխարքայ Բարեատինսկին Նախանձելով կհրաւիրէր Կաթողիկոսին Թիֆլիզ գալ, այս հրաւէրին գլխաւորնպատակը էր յօժարեցնել նրան երկու Եկեղեցիներու միաւորութիւնը կատարելու: Բայց թէ ինչ դիտաւորութեամբ էր այն ժամանակ այս մասին Մատթէոս Կաթողիկոսը՝ ինձ յայտնի չէ վճռաբար: Բայց զարմանալու արժանի է Ռուսաց Ցէրութեան անգիտութիւնն այս մասին, որ չէ իմանում նա՝ թէ Կաթողիկոսի վճռական կամքը, որ ընդդէմ է Հայաստանեայց Եկեղեցւոյն, չէ կարող իր ետևէն տանիլ և ոչ մի Հայ, որ մասնակից է եղել Կաթողիկոսի համազգային ընտրութեանը, չհամարէր նրան պահապան և պաշտպան իր Եկեղեցւոյն և նրա հոգևոր և բարոյական օգտին: Վրիպելով իր պարտաւորութենէն, Կաթողիկոսը կըկորցնէ արդէն իր կարողութիւնը և իշխանութեան նշանակութիւնը և Հայոց ազգն այն ժամանակ իր վրայ կառնէ իր Եկեղեցւոյ և միւս իրաւանց պաշտպանութիւնը:

Վենետիկու Մխիթարեան միաբանութեան հետ մի քանի անհամաձայնութեան պատճառով Այվազեան Գաբրիէլ Վարդապետը, հիմակուայ թէմական առաջնորդը Բեսարաբիոյ,

Digitized by Google

իր ընկերներովը դարձաւ մեր Եկեղեցւոյ ծոցը և իր գործունէութիւնը Փարիզի մէջ շարունակելով, հիմնեց այն մայրաքաղաքի մէջ Հայկական դպրոց, ուր կարճ միջոցում ժողովեցան մեզմէ մինչև վաթսուն ուսանող: Հասկանալով այս գործի նշանակութիւնն ապագայումը մեր ազգի համար. Ռուսաց տէրութիւնն իսկոյն ձեռը մխեց կործանել այդ դպրոցը միջնորդութեամբ Այվազեանի եղբօրը, որ այն միջոցին Փարիզ էր և տնօրինեց այնպէս որ Գաբրիէլ Վարդապետը, երեսնամեայ ուրացողը Հայոց Եկեղեցւոյ, նշանակուեցաւ Թէմակալ առաջնորդ Բեսարաբիոյ առանց Կաթողիկոսի և սինոդի կամ ազգի հաճութեան և ընտրութեան, այսպէսով Փարիզի դպրոցն էլ խափանվեցաւ և Գաբրիէլ վարդապետնէլ մեծ պատուի արժանացաւ իր կամակցութեամբ Ռուսաց տէրութեան ցանկութիւնը կատարելու և մեր Եկեղեցւոյ ինքնազոյութիւնը խանգարելու համար: Առաջարկելով Խալիբեան դպրոցի յայտարարութիւնը. կարևոր համարեց նա հիմնել այդ դպրոցը ի Թէոդոսիա, նրա համար, որ ուսանող պատանիք, որոնք կրթութիւն ստանալու համար կանցնէին Եւրոպա, առաւել դիւրութեամբ կարող լինին մըտանել նրա դպրոցը ուր պիտի մատակարուէր նրանց Ռուսական ուղղութեամբ կրթութիւն, յիշեալ յայտարարութիւնը, որ Գաբրիէլ Վարդապետը Ալեքսանդր կայսեր եղբօր Կոստանդին աւագ իշխանին էր առաջարկել Փարիզ. կանուխ քննութեան տակ դրուեցաւ Ռուսաց սինոդի գլխաւոր (օբէր պրօկուրոր) արտաքին գործոց պաշտօնէին ձեռքով: Սրանք արդէն յուսով էին, որ Գաբրիէլ Վարդապետի Խալիբեան դպրոցը պիտի պսակէ իրանց և այլոց ջանքը երկու Եկեղեցիներու միաւորութեան մասին:

Ահա մի ուրիշ տեղեկութիւն էլ Այվազեան Գաբրիէլ Վարդապետի մասին: Թիֆլիզէն երկու վրացւոյ վարդապետ ուղարկուած են լինում Բարեատինսկիէն Սև ծովու մօտ եղած քաղաքներն, այն նպատակով որ, այնտեղ Թշնամութիւն ձգեն Քրիստոնեայներու և Օսմանցւոց մէջ, որոյ մասին յանձնարա-

Digitized by Google

ռակտ թուղթ էլ են ունենում Լէյլի զօրապետի ստորագրութեամբ, կասեն թէ Այվազեան Գաբրիէլ Վարդապետն էլ տէրութեան յանձնարարութիւն է ունեցել երկու ամսէնը միանգամ անց կենալ Բաթում և Տրապիզոն, նոյնպէս Քրիստոնեաները Օսմանեան տէրութեան դէմ խռովացնելու համար: Հետագայ պարագայն գուցէ մասնաւոր հաստատութիւն համարուի վերևն ասուած տեղեկութեանց: Փոխարքայ Բարեատինսկին կամենալով Օսմանեան տէրութեան Հայաբնակ գաւառներու մէջ Ռուսաց տէրութեան հպատակներ ճարել, չգիտեմ ինչ ծածուկ գործակալներու միջնորդութեամբ, Վանու և Խարբերդու նահանգներէն կանչել է Թիֆլիզ աւելի քան քառասուն անձինք՝ այն դիտաւորութեամբ, որ նրանց դարձնէ Ռուսաց հպատակութեան տակ և յետոյ նա աւելի զօրաւոր պատճառ ունենայ խառնուիլ այդ երկրի Հայոց գործերու մէջ և խռովացնել նրանց Օսմանեան իշխանութեան դէմ. Վանու բնակիչները Էջմիածին կը հասնին և իրանց խնդիրը կը մատուցանեն Մատթէոս Կաթողիկոսին. կասեն թէ Կաթողիկոսը պատառել է այդ խնդիրը՝ քարոզելով նրանց ինչ որ հարկն էր, և դարձուցել է իրանց երկիրը, Խարբերդի բնակիչները ուղիղ Թիֆլիզ են գնացել, ու հանդիպել են Ջալալեանց Սարգիս Եպիսկոպոսին և նրա միջնորդութեամբ իրանց խնդիրը մատուցել են փոխարքային: Ռուսաց տէրութիւնը, որ արևելեան վերջին պատերազմի ժամանակ կը փափաքէր Կաթողիկոսի միջնորդութեամբ ազդեցութիւն գործել Հայոց վրայ, սրա բաւական ապացոյց է այն նշանաւոր խօսքը, որ Բարեատինսկին միանգամ ասել է Ջալալեանց Սարգիս եպիսկոպոսին, թէ Կալկաթայի Հայքը նրա համար մի ողջ զումարտակ զօրքի նշանակութիւն ունին, անշուշտ Օսմանեան և Պարսից տէրութեան Հայերն էլ նոյն արժէքը պէտք է ունենան նրա աչքին:

Ահա ձեզ և մի ուրիշ զարմանաց արժանի անցք էլ: Մատթէոս Կաթողիկոսը խնդրել է Անգլիացւոց դիսպանին. Պարսից տէրութեան մէջ, հովանաւոր լինել Հայ ժողովրդեան իբրև

Digitized by Google

քրիստոնեայ. Ռուսաց դեսպանն իմանալով Կաթողիկոսի այս խնդիրը, իսկոյն ծանուցել է Գորչակով պաշտօնէին. իսկ նա տեղեկութիւն է տուել այդ մասին Կովկասու փոխարքային: Այս վերջինը դժգոհութեամբ հարցուցել է Կաթողիկոսին՝ թէ վասն էր այդ յանձնարարութիւնը չէ արել նա (Կաթողիկոսը) Ռուսաց դեսպանին. Կաթողիկոսը պատասխանել է, թէ ինքը յանձնելով իր Ազգը քրիստոնեայ Տէրութեան դեսպանին հովանաւորութեանը, ոչ ինչ զանցառութիւն չէ գործել իր պարտաւորութենէն և ասել է. Թող ձեր դեսպանն էլ նրա հետ միասին պաշտպանէ իմ ժողովուրդը: Հետևանքն այն է եղել վերջապէս, որ փոխարքայն սաստիկ յանդիմանութիւն է գրել Մատթէոսին և արգիլել է նրան ինքնակամօրէն նամակագրութիւն անել Ռուսաց Տէրութեան սահմանէն դուրս: Ահա այս վիճակին է ենթարկուած ամբողջ Հայոց ազգէն ընտրուած Կաթողիկոսն ամենայն Հայոց, իբրև բանտարկուած՝ իր նամակներն ու կոնդակները պէտք է յառաջ ուղարկէ փոխարքային քննուելու համար:

Ներսէս Կաթողիկոսի վախճանելէն յետոյ, Զալալեանց Սարգիս եպիսկոպոսը Թիֆլիզու առաջնորդութեան պաշտօնն էր վարում, բայց այլ և այլ կասկածանքներու տակ էր ձգել իրան, Ռուսաց Տէրութեան հետ ունեցած գաղտնի յարաբերութեանցը, և Ներսէսեան հոգևոր ուսումնարանին Ռուսական ուղղութեամբ ուսումն և կրթութիւն տալու ջանքին համար: Թիֆլիզու ժողովուրդը շատ անգամ դիմել էր Մատթէոս Կաթողիկոսին ուսումնարանը բարեկարգելու, ազգովին հոգաբարձուներ ընտրելու և ուսումնարանին Հայկական կրթութեան ուղղութիւն տալու համար, Մատթէոս Կաթողիկոսը վերջապէս չդիմանալով երկու երեք անգամ իր մօտ գնացող պատգամաւորներու Ներսէսեանքին, ժողովրդեան կամքը կատարեց: Բայց երբ նրա հրամանին կոնդակը կարդացուեցաւ նախ Եկեղեցւոյ մէջ և ապա ուսումնարանին, Զալալեանց Սարգիս եպիսկոպոսը համարձակ ասաց բազմաթիւ ժողովրդեան մէջ,

Digitized by Google

թէ Կաթողիկոսի կոնդակը ընդդէմ է Տէրութենէ հաստատուած 1836 թուի կարգադրութեան, և հոգաբարձուները ընտրութեամբ նշանակելը ապօրինաւոր է, վասն զի յիշեալ կարգադրութեան զօրութեամբ վիճակաւորը միայն ունի եղել իշխանութիւն ուսումնարանի վրայ և ոչ Կաթողիկոսը կամ ժողովուրդը: Ժողովուրդը շփոթուելով առաջնորդին այսպէս համարձակ ընդդիմութենէն և բացաթձակ պաշտպանելէն այս կարգադրութիւնը, իսկոյն մի բողոքագիր ուղարկեց Կաթողիկոսին ամբողջ հասարակութեան ստորագրութեամբ՝ Սարգիս եպիսկոպոսին հրաժարեցնելու համար: Ժողովրդեան բողոքագիրը ընդունեց Կաթողիկոսը և Սարգիս եպիսկոպոսին հրաժարեցուց իր պաշտօնէն, նրա տեղ Մակար եպիսկոպոսին նշանակելով առաջնորդ Թիֆլիզու ժողովրդեան խնդրելովը: Թիֆլիզու Հայ ժողովրդեան օրինակին հետևեցան նաև Շուշուայ, Երևանու, Սղնախու և այլ Հայաբնակ քաղաքներու ժողովուրդները: Սարգիս եպիսկոպոսը ամեն հնարք գործ դրաւ այս միջոցին, այս բաներու առջև առնելու, մատնողութիւն տէրութեան մօտ, սպառնալիք եկեղեցականաց վրայ, կաշառ, խոստմունք և նենգութիւն. բայց բարեբաղդութեամբ Բարեատինսկի իշխանը, փոխարքայն Կովկասու, որ իր բարեկամն ու պաշտպանն էր այն միջոցին Թիֆլիզ չգտնուելով և յետոյ էլ իրան անծանօթ անձն կայսեր եղբայր Միքայէլ աւագ իշխանը փոխարքայ նշանակուելով՝ ստիպուեցաւ Սանահնայ վանքն քաշուիլ. հրաժարում տալով Կաթողիկոսին որ և է եկեղեցական պաշտօն ընդունելու և մերժելով Կաթողիկոսի հրամանը, որ էր նշանակելն իրան Թադէոս եպիսկոպոսին տեղ առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց Եկեղեցեաց վրայ:

Մի քանի ժամանակ էր, որ Ռուսաց տէրութիւնը թէ Կալկաթայի Հայոց և թէ Մատթէոս Կաթողիկոսի և ժողովրդեան գանգատները իմանալով 1836 թուի կարգադրութեան մասին առաջարկել էր նրան մի նոր կարգադրութիւն յօրինել և Տէրութեան յառաջ հանել: Կաթողիկոսը մի նոր կարգադրու-

Digitized by Google

թիւն առաջարկեց առանձին նամակով, որոյ մէջ բացատրել էր միանգամայն 1836 թուի կարգադրութեան վատ ազդեցութիւնը Եկեղեցւոյ վարչութեան մէջ և այն այլևայլ հանգամանքներն, որոնք տեղի էին տուել Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ անվերջանալի գժտութեանց և խռովութեանց:

Տէրութիւնը երբ ստացաւ այս նոր կարգադրութիւնը, զբաղած լինելով այն միջոցին բուն Ռուսաստանի մէջ պատահած անցքերով՝ լռութեամբ պատասխանեց: Այս այն միջոցին է՝ երբ Ղուկաս եպիսկոպոսն Արագածունի վախճանեցաւ և տեղակալութեան պաշտօնը թափուր մնաց ու Սարգիս եպիսկոպոսին էլ ասպարեզ բացուեցաւ իր բանսարկութեան խաղերը խաղալու, վասնզի նա Սանահնայ վանքը քաշուելով չէր ննջած՝ այլ մի փոթորիկ հանելու էր զբաղած, ինչպէս էլ մի փոքր յետոյ յանկարծ տրաքուեցաւ:

Տէրութեան այս խորհրդաւոր լռութեան ժամանակ, յանկարծ տրաքուեցաւ մի անակնկալ դէպք, Էջմիածնի միաբանութենէն մի քանի եպիսկոպոսներ և վարդապետներ, մի ձեռագիր բողոքագիր հրատարակեցին Մատթէոս Կաթողիկոսի մասին, յանուն բոլոր Հայ ժողովրդեան Ռուսաստանի և ուղարկեցին այն բոլոր Հայ երևելի պաշտօնատարներու Ռուսաց Տէրութեան մօտ, նշանակելով նրա մէջ թէ նոյն բողոքագրի օրինակէն ուղարկած են նաև Օսմանեան, Պարսից և Հնդկաց երկիրներումը գտնուող Հայոց: Ռուսաստանի ժողովուրդն սարսափած այս իրողութեան վրայ, պատգամաւորներ ընտրելու ժողովներ կազմեց, որոնք Էջմիածին գնալով այս անպատեհ անցքին շարժառիթը քննեն և Հայոց Կաթողիկոսին պաշտպանեն: Տէրութիւնն ամեն հնարք բանեցուց խափան լինել այս պատգամաւորութեանց. ուստի և հազիւ հազ Թիֆլիզու ժողովուրդը միայն կարող եղաւ պատգամաւորներ ուղարկել: Պատգամաւորներու արած քննութենէն յայտնի երևաց, որ Ջալալեանց Սարգիս եպիսկոպոսին գլխի տակէն է զարթեցուցած այս բողոքագիրը 110 յօդուածով, որպէս զի Կաթողիկոսին՝ որ

Digitized by Google

մօտեցած էր ժողովրդեան այս միջոցին, մի քանի անխոհեմ միաբաններու ձեռքով գահընկեց անելով՝ ինքն իր նպատակներուն հասնի :

Տէրութիւնը տեսնելով թէ ժողովուրդն ուղակի պաշտպան կեցաւ Կաթողիկոսութեանը, մի սպառնալի թուղթ գրեց Էջմիածնի սինոդին և բոլոր միաբաններուն, ասելով թէ ինչպէս են համարձակել նրանք Հայոց ժողովրդեան դիմել՝ փոխանակ ուղակի Տէրութեան դիմելու, և թէ որ բողոք ունէին իրանց Կաթողիկոսի վրայ, պարտաւոր էին Տէրութեան յայտնել և ոչ ժողովրդեան: Միաբանութիւնը լուռ կեցաւ մի ժամանակ տեսնելով որ իր բողոքը ժողովուրդն չյարգեց և Տէրութեան առջևն էլ հրապարակաւ գործի չեղաւ, գործի լինելով միայն՝ իր դրդիչ պարագլուխ Սարգիս եպիսկոպոսի ձեռին Տէրութեան դարանները խաղալու :

Մատթէոս Կաթողիկոսը վախենալով միաբան Վարդապետներէն և գլխաւորապէս Սարգիս Զալալեանցէն, որ նրանց թէ փողով և թէ խօսքով գրաւել էր իրան գործիք լինելու, հաշտութիւն արաւ նրա հետ մի շողոքորթ նամակով, նրան Շուշայ առաջնորդութեան հրաւիրեց կատարելով նրա սոմն ապօրինաւոր պահանջքը. ահա յիշուած նամակէն մի քանի խօսք մեր ասածին ապացոյց լինելու համար :

Ծանրակշիռ հանգամանք գործոց վիճակին եւ եղանակ արդեան կառավարութեան նորին, ըստ մերումս քաջ կշռադատութեան կարօտին անշուշտ առն առաւել հմտագունի ի գործ թէմական տեսչութեան, որ գիտիցէ հանճարեղ, խոհեմ եւ բազմափորձ գործունէութեամբ ի կարգի առնուլ եւ անսայթաք ծանր հովուականն պարտաւորութիւն: Զնեզ ծանուցեալ ընդունակ յաւէտ ի պաշտօն թէմական վարչութեան բազմամեայ փորձառութեամբ հմտացեալ, հրաւիրեմ այսու կոնդակաւ մերով յանձն առնուլ յօժարութեամբ զսոյն առաջարկեալ պաշտօն եւ զկամս հանութեան մերոյ յայտնել մեզ գրաւորապէս, եթէ դժուար ինչ համարեսցի զայն ձեր այսր անձամբ առ ի մօտոյ խորհրդակցելոյ զկարեւորացն խրիս, զի մի անազանեսցուք եւ մեք միջնորդ կալ բարձրագոյն քաղաքական տեսչութեան առ ի հաստատութիւն ի նոյն պաշտօնի ըստ կանոնաց պետութեան :

Թուամբ զի սրբազնութիւն ձեր ելցիցէ տհամ ընդ այս բարեմիտ առաջարկութիւն մեր, որ հայի յօգուտ ազգի եւ Եկեղեցւոյ սրբոյ մերոյ. վասն զի կեալով մընալով ձեր ի խորշս վանօրէից չունիք արդիւնաւորել ինչ, ոչ զշահ Ազգին, որում պարտաւոր եք սրբազան հովուական պաշտօնիւ եւ ոչ անձին, թողլով ապագործ զկար եւ զգօրութիւն աստուածապարգեւ շնորհաց իբրեւ քանքարաթագոյց ըստ Տէրունական բանին :

Ի 25 նոյ. 1864 ՎՏՏ. ՄԱՏ. ԿԱԹՈՂ.

Digitized by Google

Սարգիս եպիսկոպոսը այս հրաւէրին վրայ վեր կեցաւ գնաց Կաթողիկոսին մօտ. նախ նրա ժողովրդին բոլոր տուած արտօնութիւնները ետ առնել տուաւ և մի հալածում անել տուաւ նրան իրա պաշտպանողներուն դէմ. 1836 թուի կարգադրութիւնը աստուածային ներշնչութեամբ շինուած համարել տուաւ Կաթողիկոսին. վերստին պաշտպան կենալ տալով նրան նոյն կարգադրութեան, որոյ դէմ բողոքել էր ինքը Կաթողիկոսը տէրութեան և փոփոխութիւնն էր խնդրել. Գաբրիէլ վարդապետին տարևոր վէճը դադարել տուաւ և տէրութեան ներշնչութեամբ Լազարեանց իշխաններու ձեռքով առաջարկել տուաւ հրաժարելու Կաթողիկոսութենէն: Մատթէոս Կաթողիկոսը մեծ յօժարութիւն ցոյց տուաւ հրաժարելու այն վեց հազար ռուբլի թոշակը ստանալով, որ մի ժամանակ տէրութիւնը առաջարկել էր Ներսէս Կաթողիկոսին, բայց սա կամեցաւ երեք տարուանը կանխիկ ստանալ, այս մասին եղած բանախօսութեանց մէջ տանող բերողն եղաւ Սարգիս եպիսկոպոսը, այս իրողութեանց ճշմարտութիւնը յայտնի է մի նամակէ, որ գրած է Կաթողիկոսը իշխանին Օրբէլեանի, որ Կովկասու փոխարքայի փոխանորդն է:

Արքեպիսկոպոսն Սարգիս գնալով Ղարաբաղ բարձրագոյն իշխանութեան իւրեան հաւատացած վիճակը, ես նորան տուի մի քանի յանձնարարութիւններ, որոնք նա պարտաւոր է հաղորդել ձեզ երես առ երես, ես կատարեալ հաւատի եմ, որ նա կարժանանայ ձեր բարեհաճ ուշադրութեանը եւ բարի խորհուրդներին, որոնց մասին ինքը Սարգիս եպիսկոպոսը կը հաղորդէ ինձ:

ՃՇՄ. ՄԱՐ. ԿԱԹՈՂ.

Այս իրերը յայտնի ցոյց են տալի, որ Սարգիս եպիսկոպոսն է Ռուսաց կառավարութեան ամենագլխաւոր գործին Կաթողիկոսի հրաժարման գործը շուտով աւարտելու, բայց այս գործողութիւնն իր վախճանին հասցուներու համար, հարկաւոր էր Սարգիս եպիսկոպոսին, որ մի առթով Թիֆլիզ գնայ, նորէն ժողովրդեան սիրտը գրաւէ, Ղարաբաղ մի քանի ամիս առաջնորդութիւն անելով իրան կուսակիցներ գտնէ, որպէս զի ինքը տեղապահ նստի և կաթողիկոսական պաշտօնը կատարէ տէրութեան կամքով:

Digitized by Google

Այս կէտին է հասած հիմա մեր կաթողիկոսութեան և Եկեղեցւոյ վիճակը. ով Ս. Հայր և պատուական ժողովականք: Մատթէոս Կաթողիկոսը տէրութեան կամքով հրաժարուելու վրայ է, առանց իրան ընտրող Ազգին դիմելու: Սարգիս եպիսկոպոսը ամեն ջանք և հնարք ի գործ կը դնէ առանց Ազգին գիտութեանը կաթողիկոսութեան տեղապահ լինելու և տէրութեան կամքին համաձայն Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետի պաշտօնը վարելու: Այս անգլուխ դրութեան մէջ Էջմիածնի հինօրեայ Թանկագին ինչքերը կը ծախուին, եկեղեցականաց մէջ ամեն տեսակ անկարգութիւններ կյաճախուին, ուսումնարաններու արեան քրտինքով ձեռք բերուած իրաւունքները կը կորչին: Ռուսաստանի Հայերը կգտնուին վերջին յուսահատութեան մէջ, պարզ տեսնելով իրանց աչքով այս ընդհանուր քաղաքակրթութեան և հոգւոյ ազատութեան ժամանակ Հայոց կաթողիկոսութեան կորուստը և նրա հետ միասին Արևելեան մեծ սուրբ Հայապտանեայց Եկեղեցւոյ կործանումը և ազգայնոց անհետանալը ու փճանալը և միակ մխիթարանք և յոյս մնացել ենք նրանց համար, մենք Օսմանեան տէրութեան մեջ գտնուող Հայերս:

Արդ՝ ով Ս. Հայր և պատուական ժողովականք. այս ամենամեծ ճգնաժամուն և թշուառութեան մէջ ցոյց տանք մեր օգնականութիւնը, կատարենք մեր պարտաւորութիւնը առ մեր Եկեղեցւոյ Հայրապետութիւնը և բուն իսկ Հայաստանեայց Եկեղեցին, ինչպէս նրա Հայրապետին ընտրութեան իրաւունքը կպատկանի ամբողջ Հայոց ազգին, նոյնպէս և նրա հրաժարումն էլ կվերաբերի բոլոր Ազգին և ոչ որ և է մասնաւոր անձի կամ քաղաքական կողմանէ մի իշխող տէրութեան:

Ուստի, ես իբրև անդամ Հայոց ազգի և որդի Հայաստանեայց Եկեղեցւոյ, ինձ յայտնի և ստոյգ եղած տեղեկութիւններէն շարժուած՝ կվստահիմ իմ ազգային ժողովներու տնօրենութեանը և ձեր սրբազան Հօրդ բարձր պաշտօնէութեանը առաջարկել այս ամեն հանգամանքները և խօսքս կամփոփեմ հետա-

Digitized by Google

գայ չորս ամենակարևոր և ամենամեծ խնդիրներու մէջ, որոնք խիստ շուտով Ձեր ուշադրութեան արժանի են:

Ա. Առաջն առնել Մաւրէոս Կաթողիկոսի յուղեալն հրաժարմանը, որ անելու վրայ է Ռուսաց տէրութեան կամքով եւ ոչ իրան ընտրող ազգի. Ընտրողը բոլոր ազգն է, ուստի եւ նա պէտք է ազգին դիմէ թէ որ հրաժարուել է միայն Կաթողիկոսութենէն, շուտով գործել, որպէս զի առանց համաձայնութեան ազգի ոչ ոք չհամարձակի որ եւ է տէրութեան տուած իրաւունքով, իբրեւ տեղապահ Կաթողիկոսի պաշտօն վարել, որովհետեւ այս սկզբունքը կատարեալ կորուստ է Հայաստանեայց Եկեղեցւոյ դարեւոր աւանդութեանցը, օրէնսդրութեանը եւ ինքնագոյութեանը:

Բ. Վերահաստատիլն գործել, ինչպէս էջմիածնական սացուածքներուն եւ կալուածքներու վրայ, նոյնպէս եւ Եկեղեցիներուն եւ բոլոր վանքերուն իբրեւ հնդհանուր եկեղեցւոյ եւ ազգի սեպհականութիւն, եւ ապահով պահպանութեան տակ դնել, որ չվճռանան Մայր աթոռոյ սեպհականութիւնը եւ չվաճառուի վերջապէս ազգի սացուածքներն ու կալուածները, եւայլն:

Գ. Իսպառ վերացնել Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջէն 1836 թուի Ռուսաց տէրութեան տուած կարգադրութիւնը, եւ աշխատել մեր Եկեղեցւոյ վարչութեան ձեւը, մեր Կաթողիկոսի դարեւոր իրաւունքները՝ մեր նախնական աւանդութեանց եւ օրինադրութեանց համաձայն՝ վերահաստատել եւ պահպանել բոլոր Հայոց ազգին մէջ ինչ տէրութեան ներքեւ էլ գտնուած լինին: Վասն զի մի է Հայոց ազգն մի է նրա անցեալը եւ ներկայն եւ մի պէտք է լինի եւ նրա ապագայն: Մի է Հայաստանեայց Եկեղեցին մի օրինակ պէտք է լինի նաեւ նրա վարչութիւնը:

Դ. Մեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ նրա Կաթողիկոսութեան ինքնագոյութիւնը ու իրաւասութիւնը, այն տէրութեանց պաշտպանութեամբ երաշխաւորել, որոց ներքեւ գտնուում է Հայոց Ազգէն ժողովուրդ, եւ նրան այն ընդհանուր իշխանութիւնը պաշտպանելու իր ժողովուրդն, որն որ ճանաչել են մի ժամանակ նրա միջում Բիւզանդիոնի Կայսրները, Պարսից Թագաւորները, մեծամեծ խալիֆաները, Սուլթանները ու Շահերը: Նշանակել երես՝ փոխանաց համար գումարուելու մի ապահով քաղաք ուրազատէրէն կարելի լինի խորհրդակցիլ Կաթողիկոսի ընտրութեան վրայ, եւայլն:

Արդ՝ սրբազան Հայր և պատուական ժողովականք. այս տեղ է մեր անելու երկրորդ քայլը ազգային և բարոյական յառաջադիմութեան ճանապարհին մէջ: Առանց ազգային հոգևոր և բարոյական լուսաւորութեան չկայ մեզ համար և ազգային մտաւոր և մարմնաւոր զարգացողութիւն:

Ուրեմն քննենք, մեր ազգային ժողովներու ձեռքով այս մեծ խնդիրը, խորհինք սրա մասին և մեր իրաւացի պահանջը հասուցանենք մեր ամենազութ Օսմանեան տէրութեանը: Ցանուն ազգի ասենք նրան, թէ Հայոց ազգը վայելելով հիմա Օսմանեան տէրութեան բարեհաճութիւնը պարտաւորուած է ասել մարդկութեան սիրոյ համար, նոյն իսկ Օսմանեան և այլ տէրութեանց օգտին համար, թէ ամենայն Հայոց Կաթողիկո-

Digitized by Google

սութիւնը այսպիսի վիճակումն է Ռուսաց տէրութեան մէջ, ապէնք՝ թէ արդարութիւնը և արևելյալ տէրութեանց օգուտը կպահանջեն, որ այս Ընտրեալը բոլոր Հայոց ազգի հոգևոր Տէրը, (որոյ բազմութիւնը կբնակի Օսմանեան, Ռուսաց, Պարսից, Անգլիոյ և ուրիշ տէրութեանց մէջ), պիտի լինի բոլոր Եւրոպական տէրութեանց հովանաւորութեան և պաշտպանութեան տակ, ինչպէս Կաթողիկոսութիւնը նոյնպէս և նրա Աթոռը: Թէ որ Ռուսաց տէրութիւնը չհանձի այս մեր իրաւացի խնդիրը, մենք աներկբայ լինինք, որ Բ. Դուռը և այլ Տէրութիւնները կհաստատեն մեր Կաթողիկոսութեան և Եկեղեցւոյ անկախութիւնը և ինքնուրոյնութիւնը:

Ես՝ ճանաչելով իմ ազգայնոց անխախտ սէրը իւր առաքելական սուրբ Եկեղեցւոյ վրայ, հաւաստի եմ, որ մեր այն ազգայինք, որոնք Ռուսաստան, Պարսկաստան և Հնդկաստան կգտնուին, տեսնելով մեր սրբազան Պատրիարքին և մեր ազգային ժողովներու միասիրտ և միաբան ջանքը այս սրբազան գործը կատարելու համար՝ սիրտ և հոգի կառնեն մեր ազգաշինական օրինակէն ու գործակից կլինին մեզ, խնդրելով իրանց տէրութեանց միջնորդութիւնը, ազատելու համար մեր դրեթեր իշխանութիւնը ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և մեր Մայր աթոռը, այդ տարտամ, ստրուկ և խարխուլ վիճակէն, որ գտնուում է այսօր Ռուսաց տէրութեան մէջ:

Մնամ.... Լայլն,

Սամենախոնարհ անդամ Հայաստանեայց Եկեղեցւոյ և ողջ Հայոց Ազգի,

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Կ. Պոլիս, 12 Յուլիս, 1866

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

UNIVERSITY OF MICHIGAN
3 9015 04146 1024

Digitized by Google

Digitized by Google